21.09.2016թ.

Սևան համայնքի ղեկավար Ռ. Ղուկասյանի շնորհավորանք-ուղերձը Անկախության օրվա առթիվ

Հարգելի համաքաղաքացիներ

Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա առթիվ:

Սա հայ ժողովրդի ամենանվիրական տոներից է, որը այսօր բոլորում է իր 25-ամյակը: Արդեն քառորդ դար անկախությունը դարձել է մեր ուղեկիցը, մեր ներկան ու ապագան:

Այսքան թանկ անկախությունը մենք վաստակել ենք՝ աշխարհին և մեզ ապացուցելով, որ իրավունք ունենք ապրելու և արարելու, շենացնելու այն երկիրը, որ մեզ է ժառանգվել այնքան զոհողությունների գնով:

Ապացուցել ենք մեր բանակի ստեղծմամբ և կայացմամբ, մեր հաղթանակներով, մեր պետականության կերտմամբ, բոլոր ժամանակների մեր հերոսների արյամբ ու կյանքի գնով:

Այսօր մեր երկրի սահմանները հսկում են հայոց բանակի զինվորները: Նրանք են, որ ամեն օր գրում են հայրենասիրության ու հերոսացման իրենց պատմությունը և ամեն անգամ մեզ հիշեցնում, որ ցանկացած պահի բոլորս պետք է զինվորագրվենք հայրենիքի պաշտպանությանը՝ քաղաքացուց դառնալով զինվոր, ինչպես եղավ ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում:

Անցնելով 25-ամյա ճանապարհ՝ մենք հետևում ենք թողել դժվարին ու փորձություններով լի, սակայն միևնույն ժամանակ ինքնահաստատման տարիներ:

Ոմանց համար այն դարձավ ապրելու կերպ, ու կոչվեցին անկախության սերունդ, ոմանք իրենց կյանքով նվաճեցին խաղաղ և անկախ ապրելու մեր իրավունքը, ոմանք էլ դժվարությամբ համակերպվեցին այս անցմանը:

Անկախ բոլոր դրսևորումներից՝ շարունակվում է հայ ժողովրդի ուղին մի արահետով, որը մեր պատմության շարունակությունն է, մեր լինելիության վավերագիրը: Ու անկախության յուրաքանչյուր տարին էլ յուրօրինակ հաշվետվություն է արվածի ու մեկնարկ՝ ապագային միտված ծրագրերի:

Սիրելի համաքաղաքացիներ

Շնորհավորենք միմյանց Անկախության տոնի առթիվ, թող հաղթանակներն ու առաջընթացը դառնան մեր կյանքի ուղեկիցները, մեր երկիրն ու մեր քաղաքը մեզանից յուրաքանչյուրի հոգածության, սիրո, սրտացավ տանտիրոջ ուշադրության կարիքն ունեն:

Մեզանից յուրաքանչյուրի շնորհիվ է գրվում Հայաստանի նորօրյա պատմությունը, որ 1991թ. սեպտեմբերի 21-ին իր և իր զավակների ապագան կանխորոշեց:

Շնորհավոր տոնդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացի,

Մաղթում եմ բոլորիս խաղաղ և ապահով օրեր, բարեկեցիկ և անվտանգ կյանք: